Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՆԵՐ ՀԱՆՁՆԵՑ ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԻՆ, ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻՆ, ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԵՎ ԿԱՐՊԻՍ ՍՈՒՐԵՆՅԱՆՑԻՆ

Նոյեմբերի 15-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, տեղի ունեցավ շքանշանների հանձնման հանդիսավոր արարողություն: Նորին Սրբությունը, ի գնահատություն մեր ժողովրդին, հայ գիտությանն ու մշակույթին մատուցած իրենց ծառայության, Հայ Առաքելական Ս. Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձր շքանշանով պարգևատրեց գեղանկարիչ Էդուարդ Իսաբեկյանին, Մատենադարանի տնօրեն Սեն Արևշատյանին, Երևանի պետական բժշկական համալսարանի ռեկտոր Վիլեն Հակոբյանին և գրող Կարպիս Սուրենյանցին:

Բացման խոսքով հանդես եկավ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը՝ նշելով, որ Հայ Եկեղեցին միշտ էլ իրեն լծակից է ունեցել արժանի զավակներ, որոնք իրենց մշակութային գործունեությամբ բարձր են պահել մեր Հայրենիքի և Եկեղեցու պատիվը՝ հանուր մարդկությանը ծանոթացնելով հայ հոգու և մտքի անմոռանալի գանձերին:

Այնուհետև «Էջ Միածին ի Հօրէ» շարականի երգեցողության ներքո ներս բերվեցին Հայրապետական Սրբատառ Կոնդակները, որոնցով Նորին Սրբությունն իր գնահատանքն էր հայտնում նվիրյալ հայորդիներին: Հայրապետական կոնդակներից հատվածներ ընթերցեց Տ. Ասողիկ քահանա Կարապետյանը (Հայրապետական այս կոնդակները տես էջ 21-28):

Պարգևների հանձնումից հետո շնորհակալական և երախտագիտության խոսքով հանդես եկան օրվա մեծարյալները՝ ընդգծելով, որ ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Հայ Եկեղեցին դարավոր հայ մշակույթի և այն կերտող գործիչների կողքին է, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն է այն անմար լույսը, որ, չնայած մեր ժողովրդին վրա հասած բազում դժվարություններին ու փորձություններին, կարողացել է հային հայ պահել:

Անվանի մտավորականներին շնորհավորեցին նաև ԳԱԱ նախագահ Ֆաղեյ Սարգսյանն ու ԵՊՀ ռեկտոր Ռադիկ Մարտիրոսյանը՝ ուրախություն հայտնելով, որ այսօր մեր մտավորականությունը ամուր կապված է Հայ Եկեղեցու և նրա շնորհազարդ Գահակալի հետ, Ով ամեն ինչ անում է մեր մշակույթի և գիտության ծաղկման համար:

Ներկաներին իր օրհնությունն ու գնահատանքը բերեց նաև Ամենայն Հայոց Հայրապետը:

«Վեհարանի հանդիսությունների այս դահլիճում համախմբվել են նվիրյալներ մեր ազգի՝ իրենց մտերիմներով, իրենց հարազատներով՝ գոհություն առ Աստված բարձրացնելու, որ այսպիսի օրեր ենք ապրում, որ անցյալում են մոայլ ու մութ, ցորտաշունչ ժամանակները: Բայց անհավատության ցորտաշունչ ժամանակներում մեր արժանավոր հայորդիք ջերմացնում էին այս հարկը՝ զորավիգ լինելով Հայոց Հայրապետին իր առաքելության մեջ: Մենք հիշում ենք նրանցից յուրաքանչյուրին, որոնք իրենց քայլերն ուղղված էին պահում դեպի Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, և մենք իրրև ուսանող, պատանի հայորդիներ ներշնչվում էինք նրանցով, խանդավառվում, գոտեպնդվում: Նրանց կյանքն ու գործը, որոնց հա-

ողող էինք դառնում մենք ուսանողական նպատակների երևում, խանդավառում էր մեզ և մեզ օրինակ ծառայում: Այսօր պարգևների այս հանձնումով մենք ոչ միայն գնահատեցինք իրենց վաստակը, ծառայությունը մեր ժողովրդին, այլ նաև գնահատեցինք նրանց ծառայությունը մեր Սուրբ Եկեղեցուն, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին: Թեև սահմանափակ էին հնարավորությունները՝ աջակից լինելու Սուրբ Էջմիածնին, սակայն իրենց ծառայության մեջ, իրենց աշխատանքներով նրանք միշտ էլ զորացրել են հայոց մեջ հավատքը, ամրացրել են հիմերը Հայաստանյայց Սուրբ Եկեղեցու հայորդյաց հոգիներից ներս այդ դժվարին ժամանակներում»,- նշեց Նորին Սրբությունն իր խոսքում:

Շքանշանների հանձնման արարողությանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներ, բարձրաստիճան հոգևորականներ, մշակույթի և գիտության անվանի գործիչներ:

Հանդիսությանն անհատական կատարումներով հանդես եկան Շուշան Պետրոսյանը, Ալլա Լևոնյանը, ինչպես նաև հնագույն երաժշտության «Տաղարան» համույթը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ԷԴՈՒԱՐԴ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ ԻՐ ԵՎ ՄԵԿ ԿՏԱՎՆ Է ՆՎԻՐՈՒՄ Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ.
ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿՏԱՎԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅԱՆՆ Է ՀԱՆՁՆՈՒՄ
ՆԿԱՐՉԻ ՈՐԴԻՆ՝ ԱՐԱՄ ԻՍԱԲԵԿՅԱՆԸ

ՀԵՏՈՓՈՍ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՅԿԱԿ – Ս. ՄԱՅՐԱՎԱՆՔԻ ԵՎ ՀՈՒՅՍ ԱՌԱՔԵԼՈՒ ՄՈՄԵՆՏԸ
ՍԵՆ ՍՈՒՐԲՍՏՈՒԹՅԱՆԻ ՄԵՆ
ՀԱՅՈՑԵՂԵՑՈՒ ԵՎ ՀԱՅՈՑՄԱՆ ՀԱՄԱՐ «ՄԱՅՐԱՎԱՆՔԻ Ս. ՄԱՅՐԱՊԱՏԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾՈՒՄՆԵՐԸ

Академия наук СССР
Фундаментальная библиотека

ԴԻՑՈՒՇԵՐԻՍ ՍՈՒՐԲ ԿԱՐՈՒՄԻ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԸՆԵՐԻ
ՄԻՍՏԻՖԻԿԱՑՄԱՆ ԵՎ ԻՄՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Ս. ԽՈՒՆՈ. «Խաչը Ս. Ս. ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՄՈՓՈՒԼԸ

ԹԵՔԵՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Академия наук Армянской ССР
Фундаментальная библиотека